ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-27-Ը
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /Ք. ՆԱՆՉԱՆ / ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Գործուղվողը՝** (Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը)
Մերի Սարգսյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության ներդրումային ծրագրերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 04.08.2025թ. №1777-Ա հրամանի համաձայն 2025 թվականի օգոստոսի 7-27-ը գործուղվել եմ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (քաղաք Նանչան):

3. **Հրավիրող կողմը՝**
Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի կառավարություն

4. **Գործուղման նպատակը՝**
Մասնակցություն «Զարգացող երկրների համար ներքին շրջաններում օտարերկրյա կապիտալի ներդրում և օգտագործում» խորագրով դասընթացին:

5. **Քննարկված թեմաները՝**
Գործուղման ընթացքում քննարկվել են «Զարգացող երկրների համար ներքին շրջաններում օտարերկրյա կապիտալի ներդրում և օգտագործում» խորագրով դասընթացի շրջանակներում չինական փորձի արդյունավետությունը՝ ապահովելով զարգացող երկրներում դրանց կիրառելիությունը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**
Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ նվիրված Չինաստանի մշակույթին, զարգացմանը և մարտահրավերներին: Կազմակերպվել են տեխնիկական այցեր Շանհայ (Shanghai), Շենժեն (Shenzhen), Գուանդոնգ (Guangdong), Գանժոու (Ganzhou) և Ջիանգխի (Jiangxi) քաղաքների կազմակերպություններ և ձեռնարկություններ: Այցելել ենք Շենժենում գտնվող «TOPBAND Co., Ltd.» որը մասնագիտացված է խելացի վերահսկման համակարգերի լուծումների ոլորտում: Դասընթացները անց են կացվել «Jiangxi Vocational College of Foreign Studies, Nanchang»-ում, որը համարվում է Չինաստանի առաջատար գիտահետազոտական կենտրոններից մեկը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ (կցվում է):

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ ապահովելու սույն դասընթացի շարունակականությունը:

Դասընթացի ավարտին հայկական կողմը բոլոր մասնակից երկրների անունից հանդես է եկել եզրափակիչ ելույթով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Մերի Սարգսյան

02 սեպտեմբեր 2025թ.